ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-23/47 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 13.06.2023թ. ժամը 15:30-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Ավետիսյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Արա Խաչատրյան /գնահատող/

Արմենուհի Մադաթյան /գնահատող/

Հարություն Մարտիրոսյան /բացող/

Լիանա Հարությունյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-23/47 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-23/47 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	info@silinsurance.am
2	«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ	corporate-ins@armeniainsurance.am

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չափաբաժին	Գնման նախահաշվային գինը ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները			
		«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ		«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ			
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	40000	32000	32000	37000	37000

2	40000	32000	32000	-	-
3	40000	32000	32000	-	-
4	40000	32000	32000	37000	37000
5	40000	32000	32000	-	-
6	40000	32000	32000	-	-

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

5.1 Մասնակիցների հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման նպատակով հանձնաժողովի նիստը կասեցնել և շարունակել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, 2023թ հունիսի 15-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 15.06.2023թ. ժամը 11:00-ին

6. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 Ընթացակարգի մասնակից «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի և «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.2 «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված N 1.2-ով ներկայացված մասնակցի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 2-րդ բաժնի 2.2. կետի 2.2.7 ենթակետում լրացված չէ գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.3 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված N 1՝ Դիմում-հայտարարությունում լրացված է մասնակցի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի սխալ հղում: Միաժամանակ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Նշված օրենքի 60.1 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ 12.1. գլխի դրույթները չեն տարածվում Կենտրոնական բանկի կողմից գրանցվող իրավաբանական անձանց վրա: Կենտրոնական բանկի կողմից գրանցվող իրավաբանական անձանց իրական

շահառուների բացահայտման, գրանցման և տվյալների արժանահավատության ապահովման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող օրենսդրությամբ:

Վերոգրյալով պայմանավորված, համապատասխան կալքէջի բացակայության դեպքում՝ անհրաժեշտ է ներկայացնել մասնակցի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր համաձայն հավելված 1.2-ի, Հավելված N 1՝ Դիմում-հայտարարությունում հղում անելով վերջինիս:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ին և «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.2 և 6.3 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7.2 Հանձնաժողովի նիստը շարունակել 2023թ. հունիսի 19-ին, ժամը 15:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 609 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 19.06.2023թ. ժամը 15:00-ին

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ն և «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն սահմանված ժամկետում շտկել են հանձնաժողովի կողմից 6.2 և 6.3 կետերով կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

9. Տվյալներ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ բավարար գնահատված հատեր ներկայացրած մասնակիցներից.

1-ին չափաբաժնի մասով՝

1-ին տեղ զբաղեցրած՝ ընտրված մասնակից ճանաչել «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ին:
2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ–ին:

2-րդ չափաբաժնի մասով՝

1-ին տեղ զբաղեցրած՝ ընտրված մասնակից ճանաչել «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ին:

3-րդ չափաբաժնի մասով՝

1-ին տեղ զբաղեցրած՝ ընտրված մասնակից ճանաչել «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ին:

4-րդ չափաբաժնի մասով՝

1-ին տեղ զբաղեցրած՝ ընտրված մասնակից ճանաչել «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ին:
2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ–ին:

5-րդ չափաբաժնի մասով՝

1-ին տեղ զբաղեցրած՝ ընտրված մասնակից ճանաչել «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ին:

6-րդ չափաբաժնի մասով՝

1-ին տեղ զբաղեցրած՝ ընտրված մասնակից ճանաչել «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

10. Գնահատման արդյունքների մասին.

10.1 Հաստատել 1-ից 6-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> << օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Արմեն Ավետիսյան /նախագահ/

_____ Արա Խաչատրյան

_____ Արմենուհի Մադաթյան

_____ Հարություն Մարտիրոսյան

_____ Լիանա Հարությունյան

_____ Արսեն Սողոմոնյան /քարտուղար/